ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, հ.62, № 3, 62-63

ՏԻԳՐԱՆ ԱՐՇԱԿԻ ՋՐԲԱՇՅԱՆ
(ծննդյան 120–ամյակին)

2009թ. լրացավ անվանի երկրաբան, Հայաստանի Երկրաբանական ծառայության հիմնադիրներից մեկի, Երևանի Պետական համալսարանի աշխարհագրական–երկրաբանական ֆակուլտետի հիմնադիր և առաջին դեկան, պրոֆեսոր Տիգրան Արշակի Ջրբաշյանի ծննդյան 120-ամյակը:

Տ.Ջրբաշյանը ծնվել է 1889թ. նոյեմբերի 9-ին, Վանում (Վասպուրական): Միջնակարգ կրթությունը ստացել է Էրզրումի և Վանի վարժարաններում, ապա, 1912թ., ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1917-1920թթ. սովորել է Թիֆլիսի Անդրկովկասյան Համալսարանի բնագիտական ֆակուլտետում: 1920թ., հայտնի հայ բարերար Նուբար Փաշայի կողմից սահմանված կրթաթոշակով, Տ.Ջրբաշյանը մեկնում է Ֆրանսիա՝ ուսումը շարունակելու Սորբոնի համալսարանում, ապա՝ Փարիզի Հանքաբանական ինստիտուտում, որը գերազանցությամբ ավարտում է 1924թ. և ստանում լեռնային ինժեների կոչում: Այնուհետև, հանրաճանաչ երկրաբաններ Ա.Լաքրուայի, Գ.Օգի և Պ.Ռոնների ղեկավարությամբ, 2 տարի աշխատում է Փարիզի Բնապատմական թանգարանի հանքաբանական բաժնում:

Մերժելով այլ երկրներից ստացված հեռանկարային առաջարկները, Տ.Ջրբաշյանը որոշում է վերադառնալ Հայաստան և ծառայել իր երկրին ու իր ժողովրդին: Եվ 1926թ. նա վերադառնում է Հայաստան ու հրավիրվում Երևանի Պետական համալսարան: Շուրջ 10 տարի դասախոսի, ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչի պաշտոններում դասավանդում է բյուրեղագիտություն, ապարագիտություն, ընդհանուր երկրաբանություն, հանքաբանություն առարկաները:

Տ.Ջրբաշյանի դասախոսությունները, հագեցած լինելով երկրաբանական գիտության արտասահմանյան նորագույն նվաճումների մասին տեղեկություններով, լրջորեն նպաստեցին Հայաստանի հաջորդ սերնդի ճանաչված երկրաբանների՝ Ա.Գաբրիելյանի, Թ.Թադևոսյանի, Լ. Ավագյանի, Վ. Հասրաթյանի, Գ. Բաղդասարյանի, Վ.Լուսինյանի և շատ ուրիշների կայացմանը:

Տ.Ջրբաշյանի Ֆրանսիայից Հայաստան բերած բացառիկ հարուստ գիտական գրադարանը, բացի երկրաբանականից, հագեցած էր նաև ֆիզիկայի, մաթեմատիկայի և քիմիայի բնագավառների ձեռնարկներով: Մասնավորապես՝ ականավոր մաթեմատիկոսներ, ակադեմիկոսներ Ա.Շահինյանը և Մ.Ջրբաշյանը ակնածանքով հիշատակում էին, որ իրենց առաջին քայլերը գիտության ասպարեզում կատարել են Տ.Ջրբաշյանի օգնությամբ և խորհուրդներով:

1934թ. նրա նախաձեռնությամբ ԵՊՀ–ում ստեղծվում է աշխարհագրական–երկրաբանական ֆակուլտետը, որի առաջին դեկան է նշանակվում Տ. Ջրբաշյանը: 1935թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Մանկավարժական գործունեությանը զուգահեռ Տ. Ջրբաշյանը զբաղվել է նաև մեծ ծավալի գիտահետազոտական և երկրաբանական որոնողական աշխատանքներով Հայաստանի տարբեր շրջաններում: Նա Սերձերևանյան և Կոտայքի շրջանների երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների առաջին հետազոտողներից մեկն էր: Շերտագրական և հնէաբանական բազմաբնույթ տվյալների վերլուծության հիման վրա առաջին անգամ նրա կողմից հաստատվել է այստեղ լայն տարածում ունեցող գոյացումների սարմատի հասակը:

1927–34թթ. Տ. Ջրբաշյանը աշխատել է Հայաստանի Ժողտնտգերխորհրդի լեռնային բաժնում, այնուհետև՝ Ժողկոմխորհի կիրառական երկրաբանության և հանքաբանության գիտահետազոտական ինստիտուտում:

1935թ.-ից ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի կազմում (ԱրմՖԱՆ), Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հիմնադրման պահից (1935թ.) մինչև կյանքի վերջը Տ. Ջրբաշյանը աշխատել է այնտեղ որպես լեռնային ինժեներ, գիտական աշխատող, խորհրդական:

Կանխատեսելով ոչ մետաղական հանքային հումքի դերը և մեծ նշանակությունը Հայաստանի արագ զարգացող տնտեսության համար, Տ.Ջրբաշյանը հատուկ ուշադրություն է դարձնում դիատոմիտների, պեմզաների, հրաբխային ավազների, տուֆերի, պեռլիտների, կավերի, գիպսի, մարմարների, բարիտի, կիսաթանկարժեք քարերի առաջացման և տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտմանը: Հետազոտությունների արդյունքում հայտնաբերվեցին Նուռնուսի բարձրորակ դիատոմիտների, Կողբի և Ախթալայի բարիտի, Ջրաբերի, Էլարի, Ֆանտանի պեմզաների, Թալինի պեռլիտների, Ջրվեժի գիպսի, Ջարխեչի կրաքարային կոնգլոմերատների և այլ հանքավայրերը, որոնց

հետագա հետախուզման և շահագործման շնորհիվ ապահովվեց հանրապետության հանքահումքային հենքի ընդլայնումը և նոր արտադրությունների զարգացումը:

Նշված երկրաբանական աշխատանքների շարքում հիշատակման են արժանի Մերձերևանյան շրջանի նեոգենի հասակի գոյացումներում քարաղի կուտակումների վերաբերյալ Տ.Զրբաշյանի գիտականորեն հիմնավորված եզրակացությունները, որոնք հետագայում հաստատվեցին Երևանի քարաղի հանքավայրի հայտնաբերմամբ:

Տ.Զրբաշյանն առաջինն էր, որ 1927թ. առաջ քաշեց Հայաստանի Մերձերևանյան, Վայոց Ձորի և Սիսիանի շրջաններում տարածված պալեոգենի և նեոգենի հասակի գիպսաաղաբեր, դիատոմիտային և ավազակրաքարամերգելային շերտախմբերի հնարավոր նավթաբերության վարկածը, որի գիտական հիմնավորումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել Տ.Զրբաշյանի երկրաբանական փաստերը վերլուծելու կարողության, լայն մտահորիզոնի և բազմակողմանի մոտեցումների մասին: Մասնավորապես, Տ.Զրբաշյանը ուշադրություն է դարձնում այդ գոյացումների ծանծաղ ծովային և մերձափնյա տեկտոնական և հնաաշխարհագրական պայմաններում առաջացմանը, դրանցում ծովային ոզնիների, կորալների, ֆորամինիֆերների, ձկների կմախքների հարուստ բրածո ֆաունայի առկայությանը, աղաջրերի աղբյուրների գոյությանը, ծծմբաջրածնային գազերի արտանետման երևույթներին, պիրիտով և բիտումով հարստացված ապարներին: Այս բոլոր փաստերի համատեղ առկայությունը, ըստ համաշխարհային մասնագիտական գրականության, համարվում էր նավթի կուտակմանն ուղեկցող բարենպաստ պայման: Եվ Տ.Զրբաշյանի կողմից փաստերի նման բազմակողմանի վերլուծությունն ու համադրումը գոյություն ունեցող գրականության տվյալների հետ հիմք հանդիսացան հետագայում Հայաստանում նավթի լայնածավալ որոնողական աշխատանքների նախաձեռնման համար:

Զգալի է Տ.Զրբաշյանի ավանդն ինժեներական երկրաբանության բնագավառում: Լինելով կառավարական հատուկ մասնագիտական հանձնախմբի անդամ, նա տվել է բազմաթիվ երկրաբանական և ջրաերկրաբանական եզրակացություններ, մասնավորապես՝ կառուցվող հարավային և հարավարևելյան ջրանցքների ուղեգծերի, Ձորագեսի և Երևան-2 ՋԷԿ-երի տեղամասերի, Ողջաբերդի, Գորիսի, Սիսիանի սողանքային տեղամասերի, ինչպես նաև մի շարք նոր բնակավայրերի երկրաբանական պայմանների վերաբերյալ:

Տ.Զրբաշյանը բարձր էր գնահատում ռուս գիտնականների և, ընդհանրապես, ռուսական երկրաբանական դպրոցի դերը XX դարի սկզբների հայկական երկրաբանական գիտության զարգացման և Հայաստանի տարածքի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման գործում: Նա մտերիմ ստեղծագործական ու ջերմ մարդկային հարաբերություններ ուներ ականավոր երկրաբաններ Ֆ.Լևինսոն-Լեսսինգի, Ա.Ֆերսմանի, Պ.Լեբեդևի, Կ.Ն. Պաֆենհոլցի, Վ.Գրուշևոյի, Վ.Կոտլյարի, Ե.Միլանովսկու, Վ.Լոդոչնիկովի, Վ.Բոգաչևի, Ի.Պոլիբինի, վրացական երկրաբանական դպրոցի հիմնադիր Ա.Ջանելիձեի և ուրիշների հետ:

Տիրապետելով մի շարք լեզուների, Տ. Զրբաշյանը զգալի աշխատանք է կատարել նաև մայրենի լեզվով ձեռնարկների և դասագրքերի ստեղծման ուղղությամբ, կազմել է ընդհանուր երկրաբանության հայերեն դասընթացը, անգլերեն-հայերեն երկրաբանական տերմինաբանական բառարանը, թարգմանել Հ.Տիրելի "Ապարաբանության հիմունքները" և Մ.Ժինյուի "Շերտագրական երկրաբանություն" աշխատությունները, գրել "Հնէաբանների ամերիկյան դպրոցը. Լեյդեն, Օսբորն" գիրքը, որոնք, սակայն, այդ տարիներին անհետացան և, ավաղ, լույս չտեսան:

Հ. Կարապետյանի, Ս.Լիսիցյանի, Կ.Պաֆֆենհոլցի, Հ.Ստեփանյանի, Գ.Քոչարյանի հետ միասին Տ.Զրբաշյանը եղել է Հայաստանի աշխարհագրական ընկերության հիմնադիրներից մեկը:

Տ. Զրբաշյանը Հայաստանի երկրաբանական ծառայության ավագ սերնդի այն ներկայացուցիչներից մեկն էր, ով, չնայած իր կարճատև, ընդամենը մոտ մեկ տասնամյակ տևած գիտական և աշխատանքային գործունեությանը, մեծ ավանդ ունեցավ Հայաստանի տարածքի երկրաբանական հետազոտման և ազգային մասնագիտական կադրերի պատրաստման բնագավառներում:

Տ. Զրբաշյանը եղել է բազմաթիվ համամիութենական և միջազգային ամենախոշոր երկրաբանական գիտաժողովների մասնակից:

Իր բեղմնավոր գործունեության համար Տ. Զրբաշյանը պարգևատրվել է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի Պատվոգրով, ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի անդամ:

Տ. Զրբաշյանը վախճանվել է 1937թ., Երևանում՝ դառնալով բռնապետական ռեժիմի զոհ: Մինչ այսօր այդ տաղանդավոր երկրաբանի, նվիրյալ անձնավորության, մեծ քաղաքացու ու հայրենասերի անունը հիշվում է խորին երախտագիտությամբ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն